Հայերէն չինարարական արձանագրութիւն ունեցող վիմափոր եկեղեցին (թերեւս, նաեւ՝ նրա կողքին գտնուող եւ արձանագրութեան համար հարթած խորշ ունեցող աղոթարանը), կառուցուած է 1291 թուականին, իսկ թէ մինչեւ այդ քարայր եղել է թէ ոչ, կամ եթէ եղել է՝ իբրեւ ինչ է ծառայել, մեր պարագայում անկարելի է ստոյգ որոշել: Ինչ վերաբերում է Ն. Տոկարսկու տեսութեանը, թէ նրանք գրեթէ ժամանակակից պիտի լինեն Աղցի դամբարանին, արձանագրութեան վերծանութեամբ չի հաստատւում: Մենք հիմնաւոր ապացոյցներ չենք գտնում վերանայելու Ն. Մառի եւ Յ. Օրբելու այն համոզմունքը, թէ «Այդ քարայրերը, անկասկած, արհեստական ծագում ունեն եւ բնակարան են ծառայել Անիի առաւել աղքատ դասակարգի բնակչութեան համար եւ իրենց ներկայ տեսքով ամենեւին չեն ներկայացնում նախնադարեան կացարանների մնացորդներ, ինչպէս այդ ենթադրւում էր, այդ քարայրերում ապրում են եւ այժմ»[24]:

Առաւել վիճարկելի է Արմէն Զարեանի այն դրոյթը, թէ Անին ի սկզբանէ ծրագրուել է իբրեւ ստորգետնեայ բաղկացուցիչ ունեցող քաղաք[25]:

Սակայն այս խնդիրը մասնագիտական այլ քննութիւն է պահանջում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 **Д. А. Кипшидзе.** *Пещеры Ани.* (Материалы XIV Анийской археологической кампаний 1915 года). Обработка материалов, чертежи, предисловие и комментарии Н. М. Токарского, Ереван, 1972, стр. 17.
2 Անդ, էջ 166, 171:
3 Անդ, էջ 19:
4 Անդ, էջ 121-126:
5 Անդ, էջ 122: Հմմտ. **И. А. Орбели.** *Краткий путеводитель по городище Ани*, СПБ, 1910.
6 Անդ, էջ 123:
7 **Д. А. Кипшидзе,** նշ. աշխ., էջ 124:
8 **K. J. Basmadjian,** *Le inscriptions arméniennes d'Ani.*-"Revue de l'Orient chrétien". 3e série, t. III (XXIII), 1922-1923, p. 340-341.
9 Դիւան հայ վիմագրութեան, պրակ I, Անի քաղաք, կազմեց Յ. Ա. Օրբելի, Երեւան, 1966, էջ 67-68 (N209), Ն. Տոկարսկին վիմագրի տեքստը ժամանակին փնտրել է Յ. Օրբելու կամ Դ. Ղիփշիձէի հաւաքած նիւթերի մէջ եւ չի գտել (տե՛ս **Н. М. Токарский,** *Из истории пещерного строительства в Ани.*- "Историко-филологический журнал", 1966, N 1, стр. 125-138): Դիւանի աղիւսակները տպագրուել են 1924 թ., եւ նրանցում յիշեալ վիմագիրը ներկայացուած է:
10 Սթէ/Սիթի անուան հոլովման առանձնայատկութեան մասին տե՛ս **Н. Марр.** *От редактора*, [Վիմական տարեգիր, կազմեց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1919, էջ XIII-XIV]. **Ս. Ա. Աւագեան,** *Ի յանգող անձնանունների սեռական, տրական հոլովների կազմութիւնը Ժ-ԺԳ դարերի վիմական արձանագրութիւններում*, «Մառը եւ հայագիտութեան հարցերը», Երեւան, 1968, էջ 156-160:
11 Ցանկը կազմողը, բնականաբար, Յ. Օրբելին չէ:
12 Մանրամասնութիւնները տե՛ս **Н. М. Токарский,** նշ. աշխ., էջ 135-138:
13 Անդ, էջ 137:
14 **Д. А. Кипшидзе.** *Пещеры Ани*, стр. 179-180.
15 Տե՛ս **Պարոյր Մուրադեան,** *Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները*, Երեւան, 1977, էջ 178, 182:
16 *Վրաց ժամանակագրութիւն* (1207-1318), թարգմանութիւնը հին վրացերէնից, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները **Պարոյր Մուրադեանի,** Երեւան, 1971, էջ 111:
17 **Д. А. Кипшидзе,** նշ. աշխ., էջ 122-123:
18 Տե՛ս **П. М. Мурадян,** *Проблема конфессиональной ориентации церкви Оненца.*- "Кавказ и Византия", вып. 5, Ереван, 1987, стр. 42 и 43: ՈՒՆԸՆԴՈՑ-ի ուղղական հոլովաձեւը ՈՒՆՈՒՆԴ-ն է:
19 **И. А. Орбели.** *Избранные труды*, Ереван, 1963, стр. 105.
20 Այդ արձանագրութեան կապակցութեամբ հանգամանալի քննութիւն տե՛ս **В. В. Бенешевич,** *Три анийские надписи XI века из эпохи византийского владычества*, Петербург, 1921, стр. 21-28, նաեւ՝ **Ս. Ա. Աւագեան,** *Վիմագրական պրպտումներ*, Երեւան, 1986, էջ 26-45, հմմտ. **Պ. Մուրադեան,** *Բնագրագիտական դիտարկումներ*,- ՊԲՀ, 1994, թիւ 1-2, էջ 176-182:
21 **И. А. Орбели,** նշ. աշխ., էջ 114:
22 Անդ, էջ 123:
23 Անդ:
24 Տե՛ս **П. М. Мурадян,** *Проблема..., стр. 45.*
25 Անդ, էջ 123:

ՆՈՒԻՐԱՏՈՒԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԵՐՈՒՄ

Լեւոն Սարգսեան

Ա. Նուիրատուական յօդուածներ

Միջնադարեան Հայաստանի գրաւոր աղբիւրներում, յատկապէս եկեղեցական ժողովների որոշումներում, կան բազմաթիւ յօդուածներ, որոնք աղերսւում են նուիրատուութեան հարցերին: Վաղ միջնադարում դրանց յատուկ անդրադարձել է դեռեւս կաթողիկոս Սահակ Պարթեւը (387-439):

Հայոց եկեղեցին իր հիերարխիկ աստիճանակարգով ունէր առաւել կենտրոնաձիգ եւ համապարփակ իշխանութիւն: Բարձրագոյն գահաւորակին բազմած հայրապետին ենթակայ էին բոլոր հոգեւոր իշխանաւորները, որոնք ամենատարբեր պատրուակներով երբեմն ունենում էին սուր վէճեր եւ բախումներ: Կենտրոնախոյս նկրտումներ ունեցող բարձրաստիճան բոլոր հոգեւորականներին վեհափառն իրաւունք ունէր նզովելուց բացի պատժի ենթարկել, կարգալոյծ անել, ինչպէս նաեւ աքսորել: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում անհնազանդութեան երեւոյթներ հանդէս եկան յատկապէս Սիւնիքում, Արցախում եւ այլուր: Բարձրաստիճան հոգեւորականութեան (Յակոբ Ապստամբ, Խոսրով Անձեւացի եւ այլք) ընդվզումները կաթողիկոսարանի դէմ առաւել յաճախ տեղի էին ունենում գաղափարաբանական, ինչպէս նաեւ տնտեսական հողի վրայ: Այդ իսկ պատճառով եկեղեցու աւանդապահ հայրերը հռչակեցին օրէնքներ եւ կանոններ, որոնք քաղաքացիութեան լայն ճանաչում ստացան դեռեւս վաղ աւատատիրութեան դարաշրջանում: Սահակ Պարթեւի օրօք եկեղեցական թեմերի մէջ առաջացան անհամաձայնութիւններ եկեղեցիների ու վանքերի կարգավիճակի եւ տասանորդ հարկի առնչութեամբ: Սահակն այդ հարցերը լուծելու համար գրում է օրէնքի աստիճանի բարձրացուած կանոններ, որոնցից է մեզ հետաքրքրող, ստորեւ բերուող ՇԾԵ (ՇԾԱ, ԼԶ) կանոնում կարդում ենք.

«Քանզի բազումք կարծեցին տգիտութեամբ այլ զոմն եկեղեցի ասել եւ այլ զոմն վանս, եւ տխմար բանիւք իւրեանց կամեցան կռիւս եւ հերձուածս ի մի միաբանութիւն հաւատոց եւ մոռացան զպատուիրանին բանն որ ասէ. «Մի է Տէր, մի՛ հաւատք եւ մի՛ մկրտութիւն...»[1]: Սահակի կանոններով սահմանւում են (յօդուած ԽԳ), թէ նուիրատուութեան որ մասն ում է հասնում[2]:

Հենուելով աստուածաշնչային դրոյթների վրայ, նկատի ունենալով հայ եկեղեցու շահերը, Սահակ Պարթեւը աշխարհիկ մեծահարուստ հաւատացեալներին խորհուրդ է տալիս մասնաբաժին տալ եկեղեցու հայրերին՝ վկայակոչելով Ելից գրքի 23-րդ հատուածը, ուր ասւում է. «Դատարկաձեռն ամենեւին մի երեւեսցիս առաջի իմ»[3]: «Գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց եւ ոչ ուտիճ ապականեն եւ ոչ գողք ական հատանեն եւ գողանան»[4]:

Ընդսմին կաթողիկոսը զգուշացնում էր, որ տասանորդը պէտք է տարբերել ընծայաբերումից[5]: Այս կապակցութեամբ նա բարձր էր գնահատում գաւառական եպիսկոպոսների՝ քորեպիսկոպոսների դերը, ուստի գտնում էր, որ նուիրատուութիւնները չի կարելի բաժանել կամ օտարել առանց գաւառի եպիսկոպոսի գիտութեան,– կարդում ենք Շահապիւանի ժողովի կանոնական որոշումներում[6]: Նուիրատուական ե-

© National Library of Armenia

ղանակներով ձեռք բերուած ունեցուածքը եւ պատարագներից ստացուած դրամական գումարն արգելւում է տոկոսով դնել շրջանառութեան մէջ: Ներսէսի եւ Ներշապուհի Կանոնքում (յօդուած ՈԺԱ) (ՈԷ, Գ) կարդում ենք. «Եղին ոմանք եւ վաշխս վասն դահեկանաց իւրեանց»[7]: Հետաքրքիր է ՈԻԱ (ՈԺԷ,ԺԳ) կանոնը, ուր կարդում ենք. «Եւ ժողովրդականք մի հրապուրեսցին ի նոցանէ ի բաժանումն սրբոյ եկեղեցւոյ, զի պատճառ խռովութեան բերէ, այլ զպտուղս եւ զմուտս ժողովրդականք միաբանութեամբ ի սուրբ եկեղեցին հատուսցեն ամենայն յաւժարութեամբ անխափանգ գլխաւոր քահանայիցն՝ Բ մասունք եւ կէս մասին, եւ այլ քահանայքն՝ մէն Բ մասունս, եւ սարկաւագունքն՝ մի մասն եւ կէս մասին»... եւ այլն[8]:

Մեծահարուստ մարդիկ ցանկանում էին իրենց մահուանից յետոյ թաղուել եկեղեցու ներսում, ուստի այդ նպատակի համար նրանց հարազատները ծախսում էին մեծ գումարներ: Հետեւաբար, ՈԻԸ (ՈԻԴ) կանոնը սահմանում է. «Գերեզմանս յեկեղեցիս մի իշխեսցեն առնել...»[9]: Նրա յորդորով «Իշխանք զգեաւղս եւ զդաստակերտս եւ զանձս ոսկւոյ եւ արծաթոյ, այլք յանդաստանաց եւ ի պաճարաց»[10] պէտք է տան:

ՇՃԱ (ՇՃԵ, ԼԶ) Կանոնում, դարձեալ հիմք ունենալով Ս. Գիրքը, Սահակ Պարթեւը գտնում էր, որ «Աղքատք խնամեալք, տնանկք յապահովացեալք» պէտք է լինեն: Նա զգուշացնում էր, որ տասանորդը պէտք է տարբերել ընծայաբերումից[11]: Նկատի ունենալով եկեղեցու սպասաւորների անհագուրդ սեփականելու արգահատելի արարմունքը, օրէնսդիրը սահմանում է, որ քահանաներն իրաւունք չունեն հոգեւոր օջախներին նուիրաբերուած անասունները տանել իրենց տուն[12]:

ՈԻԸ (ՈԻԴ) Կանոնը արձանագրում է. «Գերեզմանս յեկեղեցիս մի իշխեսցեն առնել...»[13]:

Կաթողիկոս Յովհան Մանդակունին (478-492 թթ.) անդրադարձել է պատարագներին, որոնք հանդիսանում էին նաեւ եկամտի աղբիւրներ: Պատարագները, ինչպէս յայտնի է, սուրբ եւ խորհրդաւոր արարողութիւններ են, սակայն երբեմն եկեղեցու սպասաւորները ծուլանում էին նախանշուած օրերին պատարագել յանգուցեալների հոգու փրկութեան համար:

Պատարագների եւ ընդհանրապէս յիշատակի օրերի մասին յատուկ նշում է Հայոց դատաստանագրքերում: «Վասն յիշատակի ննջեցելոց» յօդուածում[14] Մխիթար Գոշը արձանագրում է, որ յիշատակի արարողութիւններ կատարելիս պէտք է նախօրօք պարտադիր հաշուի առնել յանգուցեալի ցանկութիւնը[15]: Պատարագների դիմաց ստացուած նուիրատուութիւնները, ընդունուած կարգի համաձայն, բաշխւում էին նուիրաբերողի ցանկութիւնը հաշվի առնելով եւ, նուիրատուութիւնն անցնելով նոր տիրոջը, համարւում էր անձեռնմխելի: Կտակների կապակցութեամբ Մխիթար Գոշը սահմանում է, որ կտակները պէտք է ձեւակերպել ոչ պակաս 3 վկաների ներկայութեամբ[16]:

Եկեղեցուն նուիրաբերուած գոյքը չի կարելի վաճառել. «Եւ ագարակք եւ այլ ստացուածք, զատուցեալք յեկեղեցիս, մի՛ վաճառեսցի, զի կալուած յաւիտենական այն նոցա»[17]:

Կանանց անժառանգ լինելու դեպքում, գոյքը հասնում է ամուսնուն, իսկ եթէ ամուսին չունի, այն տրւում է եկեղեցուն[18]:

Սելջուկ-Թուրքերի հզօրութեան շրջանում, յատկապէս Մելիք-Շահի տիրակալութեան օրօք խորասանցի Նիզամ ալ-Մուլքի հեռատես քաղաքականութեան շնորհիւ վանքերն ազատւում էին պետական հարկերից[19]: Այս կապակցութեամբ Մատթէոս

Ուռհայեցին, գրում է, որ Մելիք-Շահը «եղեւ այր բարի եւ ողորմած եւ յոյժ քաղցր ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի»[20]:

Սակայն պատմութիւնը վկայում է, որ օտար տիրակալներն այնքան էլ «բարի եւ ողորմած» չէին քրիստոնեայ ժողովուրդների նկատմամբ: Այդ են ապացուցում նուիրատուական վիմագրերի գոնէ անէծքի բաժինները:

Բ. Նուիրատուական կալուածագրերի ձեւակերպման վկաները.

Միջնադարեան Հայաստանում, յատկապէս զարգացած աւատատիրութեան շրջանում ամենատարբեր պարագաներում որոշակի հարստութիւններ կուտակեցին հայոց վանքերն ու նրանց առաջնորդները: Այդպիսի կրօնա-մշակութային հաստատութիւններից էր հանրահռչակ Տաթեւի վանքը, որն իշխանների աջակցութեամբ աստիճանաբար սկսեց ընդլայնել սեփական տիրոյթների սահմանները: Դեռեւս 839 թ. Սիւնեաց եպիսկոպոս Տէր Դաւիթը դիմում է գահերեց իշխան Փիլիպէին՝ խնդրելով նրան «ընդ գնոյ տալ զմերձակայ ագարակն[21], ապա սեփականում է նաեւ մերձակայ Արծիւ եւ Բերդկաներեջի գիւղերը «ազատ ամենայն աշխարհական հարկաց եւ ի նեպակաց»[22]: Գործարքը կնքւում է վաճառողի եւ գնողի մատանիներով: Նուիրատուութեան արարողութեամբ նշում են օտարուող գիւղի աշխարհագրական սահմանները «...լերամբ եւ դաշտիւ» եւ այլն:

Մասնակիցները փաստաթուղթը սովորաբար մատանում էին, իսկ թագաւորը կամ գերագահ աւատատէրը կնքում էր իրենց մատանիով՝ «Մատանի եղաւ»: Նման իրաւական գործերի ընթացքն ապահովելու նպատակով Մխիթար Գոշը սահմանում է, որ կալուածագիրը կամ նուիրագիրը պէտք է ձեւակերպել ոչ պակաս 3 վկաների ներկայութեամբ[23]: Գահերէց իշխանը յատուկ նշում է, որ այդուհետեւ իր հարազատները՝ եղբայրները, որդիները կամ «խոստակդարները» (կալուածատէրերը) իրաւունք չունեն չկատարելու իր կամքը:

Այդ գործարքից հինգ տարի յետոյ՝ 844 թ. Տաթեւի վանքին է նուիրաբերւում Տաթեւ գիւղն ամբողջութեամբ: Այս արարողութեանը մասնակից են դառնում 35 վկաներ, ընդ որում 26 աշխարհիկ եւ հոգեւոր դասի 9 ներկայացուցիչներ, որոնց յանուանէ նշում է Ստեփանոս Օրբէլեանը:

Այդ վկաներն են՝

1. Գրիգոր Սիւնեաց տէր,

2. Ատրներսէհ՝ որդի Վասակայ Սիւնեաց տեառն,

3. Գրիգոր՝ Սահակայ որդի,

4. Հրահատ՝ Սահակայ որդի,

5. Արուման՝ Սահակայ որդի,

6. Հրահատ՝ Գրիգորի որդի,

7. Գագիկ՝ Գրիգորի որդի,

8. Վահան՝ Վարդանայ որդի,

Ազատներից՝

9. Հուռ,

10. Քուրդոյ ---- Շապուհի որդիք,

11. Խոսրով,

12. Ջեւանշեր՝ Թեոդորոսի որդի,

13. Աշնակ՝ Վահանայ որդի,

14. Ջագիկ՝ Վահանայ որդի,

15. Վարդան՝ Ջանադայ որդի,

16. Սահակ՝ Վասակայ որդի,

17. Միհրան՝ Թուրքայ որդի,

18. Յովհան՝ Ներսեհի որդի,

19. Մուշեղ՝ Տիրոցի որդի,

20.Հասան՝ Շապուհոյ որդի,

21. Վահան՝ Մխիթարայ որդի,

22. Մուշեղ՝ Սմբատայ որդի,

23.Վահան՝ Բաբգենի որդի,

24. Բաբգէն,

© National Library of Armenia

25. Վասակ,--------Փիլիպէի որդիք

26. Աշոտ:

Ապա ստորագրում են հոգեւոր դասի ինը ներկայացուցիչները՝

27. Ահարոն՝ Երիցու[24] վանական,

28. Գրիգոր քահանայ,

29. Ստեփանոս՝ Մաքենոցաց[25] վանական,

30. Յակոբ՝ Ոյծի[26] աւագերեց,

31. Մանկիկ՝ Ծղկայ քորեպիսկոպոս,

32. Ստեփանոս՝ Ծիծառնու[27] վանական,

33. Գրիգոր՝ դրան երեց,

34. Սիմէօն՝ Շաղատայ[28] վանական,

35. Գրիգոր՝ Սիւնեաց վարդապետ:

Սոյն կալուածագիրն ունեցել է «վեց կնիք մեծամեծ իշխանացն վասն առաւել հաստատութեան»[29]:

Այս նուիրատուական ակտը ուժի մէջ է լինելու յաւիտենապէս՝ «մինչեւ ցգալուստն Քրիստոսի»[30]: Ընծայագրում յատուկ նշում է, որ այլեւս ոչ ոք իրաւունք չունի Տաթեւ գիւղը բռնագրաւել վանական միաբանութիւնից, վաճառել, փոխանակել կամ «գրաւական դնել» այն:

Նոյն 844 թ. Սահակ իշխանի որդի Հրահատը եւ Արումանի եղբայր Գրիգորը, որոնք Քաշունիք եւ Կովսական գաւառների բնիկ տերերն էին, գալիս են Դաւիթ եպիսկոպոսի մօտ եւ Տաթեւի վանքին են ընծայում գիւղեր եւ ագարակներ: Իշխան Հրահատը կալուածագրում նշում է այս նուիրատուութեան բուն պատճառը. («Վասն իմ չար եւ անիրաւ գնացից, որ որսացեալ էի ի սատանայէ բազմազգի յանցանօք, եւ լցեալ իբրեւ զծով անթիւ չարեօք... զմտաւ ածեալ զանզաւակութիւնս իմ... գիտելով զի մահկանացու է ազգ մարդկան աստուածընկալ սուրբ խաչի ապաւէն ինձ արարի փոխանակ որդեաց») եւ Կովսականի Նորաշինիկ գիւղը, որ ձեռք էր բերուել «յարդար վաստակոց՝ ստացեալ գնոյ արծաթի» բոլոր շրջակայ տարածքներով նուիրում է Տաթեւի վանքին[31]: Կալուածագրում յանուանէ նշւում են Նորաշինիկի բոլոր սահմանները: Գործարքին մասնակցել են 18 վկաներ[32]: Նոյնը տեսնում ենք վիմական արձանագրութիւններում: Նուիրատուներից մէկը արձանագրում է, որ Հաղբատի վանքին է նուիրում իր այգին, յիշելով «զբազում յանցանս իմ»[33]:

Ցաճախ լինում են դէպքեր, երբ «հոգեցատուր» արուած գիւղերն ու կալուածները քաղաքական աննպաստ պայմանների ժամանակ յափշտակւում էին[34]: Օրինակ՝ Խովտո (կամ Խոտո) կոռավարը Գեւորգն ընծայաբերել էր Ս. Նշանին, սակայն «զինչ պատճառով» այն յափշտակել էին: Տէր Սողոմոնը Գրիգորի որդի Հրահատից «ընդ գնոյ» վերցնելով Խոտ եւ Դարատափ գիւղերը՝ նուիրաբերում են Տաթեւի վանքին[35]: Նոյն երեւոյթը տեսնում ենք Հաղարծնի վանքի նուիրատուական գործարքում[36]:

Առատաձեռն նուէրներով առանձնապէս աչքի է ընկնում Գրիգոր Սուփան իշխանը, որը Կոթ գիւղաքաղաքում կառուցած եկեղեցու սպասաւորներին, բացի ռոճիկներից, ընծայաբերում է բազմաթիւ կալուածներ, որոնցից իրաւունք չունէր օգտուելու նոյնիսկ Հայոց կաթողիկոս Յովհաննէս Դրասխանակերտցին[37]:

Երբեմն՝ նուիրաբերելու նպատակով փոխանակւում են գիւղերը: Սիւնեաց իշխան Ջեւանշերը եւ աթոռակալ եպիսկոպոս տէր Սողոմոնը (Ս. Յակոբեանի մօտ սխալմամբ՝ «Տէր-Սիմոն»)[38]: Կովսական գաւառի Բեխ գիւղը 871 թ, փոխանակում են Բաղք գաւառի Արուքս գիւղի հետ[39], ընդ որում մանրամասնօրէն նշւում են փոխանակուող գիւղերի տարածքներն ընդունուած կարգի համաձայն՝ միշտ թուարկելով գիւղերի սահմաններն արեւելեան կողմից[40]: Զաքարիա ամիրսպասալարը Հաղբատավանքին է նուիրում Աշոցքում գտնուող իր փոխանակած Հազարաշէն գիւղը, «զի այս գեղերս հեռի էին Հաղբատայ, փոխեցի եւ ետու հայրենիք... առի երկու գեղն փոխան զՀաղբատ հայրենիք ամենայն սահմանաւք, ոնց բնական եղեալ է հողով եւ ջրով, խոտամարգաւք, մայրիւք եւ ջաղացովք, գոմամարգերաւք, լերամբ եւ դաշտիւ: Եւ է այս գեղ ազատ յամենայն հարկէ ի պարոնաց, ի ձեռնաւորաց, ի գիւղականաց...»[41]:

Տաթեւի Պօղոս-Պետրոս եկեղեցու 906 թ. նաւակատիքի ժամանակ Սմբատ Ա Բագրատունի թագաւորը «ընդ գնոյ ստացեալ» կալուածներ է ընծայաբերում Տաթեւի վանքին: Այդ կալուածներից էին այժմեան Մեղրու շրջանի Կարճաւան աւանը. «Գնէ եւ զՀարժիս ի տերանցն Սիւնեաց եւ զայն եւս ընծայէ ազատ յամենայն հարկաց: Տայ եւ ի Գեղաքունի, ի Սողից գաւառիգ»[42]: Առատ նուէրներով աչքի է ընկնում յատկապէս Սիւնեաց իշխանաց իշխան Աշոտը[43]:

Շատ դէպքերում հաւատացեալները գնելով այս կամ այն կալուածը, ագարակը, գիւղը, գոյքը՝ նուիրաբերում էին իրենց համայնքի ցանկացած հոգեւոր օջախին[44]: Բազմաթիւ վկայութիւններ կան «հայրենի հող» համարուող հողակտորների, այգիների, մարգագետինների, հնձանների, ապա նաեւ նուիրատուութեան նպատակով նրանց գնման եւ վաճառքի մասին[45]: Բագարանի վիմագրերից մէկում կարդում ենք, թէ ինչպէս 1034 թ. Շապուհի որդի հայր Մարկոսը Յովհաննէս-Սմբատ շահնշահից :ԵՌ: |5000| դրամով գնելով մի շարք հողակտորներ, ճեցնում է այգիներ, կառուցում է հնձան եւ «ջաղաց մի Մրենի ետու ի ս. կաթողիկէս...[46]: Գարբանէլի որդի, իշխանաց իշխան Շապուհը, որ իրեն կոչում է «ի տոհմէն Պահլաւունի», գնում է «զՈռնակայ տափն» եւ նուիրաբերում է Սանահնի վանքին[47]: Մի շարք գանձագին այգիներ են ձեռք բերում Հոռոմոսի՝ Բագնայրի վանքերը: Ոմն «Գարեգոյն երէց» Բագնայրի վանքին նուիրում է «... գանձագին տեղն զՆորաղբոյրիկ իւր ամենայն անդաստանաւք...»[48]: Բազմաթիւ կալուածներ են ձեռք բերում Հաղարծնի, Խաթրավանքի, Հաղբատի, Սանահնի, Օշականի եւ այլ վանական միաբանութիւններ:

Հայաստանի կրօնական հաստատութիւնները մեծ կարողութիւն են կուտակում Պետրոս-Գետադարձ կաթողիկոսի գահակալութեան տարիներին: Ցիշեալ կաթողիկոսը, օրինակ հանդիսանալով միւսներին, Բագնայրի եկեղեցուն է ընծայում իր «գանձագին հայրենիքը», ինչպէս նաեւ «:Է: (7) տուն, գանձագին կուղպականին, որ Վասլին փնդկին ընդդէմ է»[49]: Ցաղաց քարի միաբանութիւնը իբրեւ նուէր ստանում է «մարգ եւ այգի»:

Հետաքրքիր բովանդակութիւն ունի Ջուրջի թոռ Ամիրայի նուիրատուական արձանագրութիւնը: Նա գրում է. «զՅաղթա այգին, որ ի պարոն Տարսաիճէն գնեցի :ԴՌ: (4000) դրամ ու ի :Գ: (3) ջորի տվի ի սբ ուխտս...»[50]: Այս նուիրատուութիւնը չեղեալ յայտարարողները պարտաւոր են :ԴՌ: դրամը եւ 3 ջորիները ետ վերադարձնել Նորավանքին[51]:

Քաղաքական պայմաններից դրդուած եւ երկրի շահերը նկատի ունենալով՝ թագաւորը իրաւունք ունէր ամբողջական գաւառներ, քաղաքներ, գիւղեր ու ագարակներ ընծայել իրեն հաւատարիմ աւատին ի հաշիւ պետութեան անհաւատարիմ անձանց տիրոյթների: Օրինակ վերցնենք Նախիջեւանի փաստը, որը կռուախնձոր դարձաւ Հայաստանի երկու հզօր իշխանական տոհմերի՝ Սիւնեցիների եւ Արծրունիների միջեւ: Հոգեւորականութիւնը եւ եկեղեցին մշտապէս նեցուկ են եղել երկրի գերագոյն սիւզերենին, եւ վերջինս պարտաւոր էր վարձայատոյց լինել նաեւ նիւթական արժէքների տրամադրմամբ, մանաւանդ որ աշխարհիկ վերնախաւի իշխանութեան բացակայութեան պայմաններում եկեղեցու

© National Library of Armenia

հայրերն օժտուած էին քաղաքական իշխանութիւն վարելու օրինականացուած կարգավիճակով:

Հայ եկեղեցին ամուր հենարան եւ կապող օղակ էր միջաւատական յարաբերութիւններում, ուստի առատ նուէրներ էր ակնկալելու թագաւորից, զահերէց եւ գահակալ իշխաններից: Եւ պատահական չէ առատ նուիրատուութիւնների այն հեղեղը, որ հոսում էր դէպի վանքերի շտեմարանները: Քննարկուող ժամանակահատուածում՝ 9-14-րդ դարերում, հայ առաւելապէս բարձրաստիճան հոգեւորականութիւնը նուիրատուութեան եւ գանձագին եղանակներով ստացաւ բազմաթիւ անշարժ եւ շարժական գոյք, հասութաբեր հաստատութիւններ, որոնց նկատմամբ ունէր առաւելապէս սեփականատիրական, քան տիրութեան իրաւունք, որը հաստատուած էր կանոնական որոշումներով, սովորութային իրաւունքով եւ զարգացած աւատատիրութեան դարաշրջանի «Գիր-վճիռներով»:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 *Կանոնագիրք Հայոց*, հ, Ա, աշխատասիրութեամբ **Վ. Յակոբեանի**, Երեւան, 1964, էջ 386:
2 Նոյն տեղում, էջ 400-401:
3 Նոյն տեղում, էջ 412-413:
4 *Ելից*, ԻԳ, 15: *Կանոնագիրք*, Ա, էջ 421:
5 *Կանոնք Սահակայ Պարթեւի*, յօդ. ԾԵ:
6 *Կանոնագիրք Հայոց*, Ա, էջ 455. տե՛ս *Կանոնք Շահապիւանի ժողովի*, յօդ. ԺԶ:
7 *Կանոնագիրք Հայոց*, Ա, էջ 479
8 Նոյն տեղում, էջ 483
9 Նոյն տեղում, էջ 486
10 Նոյն տեղում, էջ 421: «Պաճար» նշանակում է «նախիր, անդեայ, արջառ, եզն եւ կով, լայնաբար՝ ամենայն անասուն»,- տե՛ս *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, Երեւան, 1981, էջ 590-591:
11 *Կանոնագիրք Հայոց*, հտ. Ա, աշխատասիրութեամբ **Վ. Յակոբեանի**, Երեւան, 1971, էջ 486:
12 հմմտ. **Մխիթար Գօշ**, *Գիրք դատաստանի*, աշխատասիրութեամբ **Խոսրով Թորոսեանի**, Երեւան, 1975, Գլ. ՄԳ, էջ 381, տես նաեւ էջ 117:
13 **Մխիթար Գօշ**, էջ 117:
14 **Մխիթար Գօշ**, էջ 381:
15 Նոյն տեղում, յօդ. ՃԶԳ, էջ 372:
16 Նոյն տեղում, էջ 66:
17 Նոյն տեղում, յօդ. Ղ, էջ 68:
18 Նոյն տեղում, յօդ. ՂԲ, էջ 69-70:
19 **Յակոբ Մանանդեան**, *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան*, հտ. Գ, Երեւան, 1952, էջ 78:
20 **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, աշխարհաբար թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները Հրաչ Բարթիկեանի, Երեւան, 1981, էջ 222:
21 **Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի** *Պատմութիւն տանն Սիսական* ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 132: Այսուհետեւ՝ Ստեփանոս Օրբէլեան:
22 **Գր. Գրիգորեան**, *Սիւնիքի վանական կալուածատիրութիւնը 9-13-րդ դարերում*, Երեւան, 1973, էջ 95:
23 **Մխիթար Գօշ**, էջ 72-73:
24 Երիցուվանքը (Երիցավանք) գտնւում է Կապան-Գորիս ավտոմայրուղու աջակողմեան սարալանջին, այժմեան Արծուանիկ գիւղից վեր: Գիւղի մերձակայքում է գտնւում դաւաճան «Ծոն Փոանգիւլի» անշուք տապանաքարը:
25 Մաքենոցաց կամ Մաքենեաց վանքը եղել է Հայաստանի ամենանշանաւոր կրթա-մշակութային կենտրոններից մեկը: 9-րդ դարի առաջին տասնամեակներին Բաբեկը (Բաբան Պարսիկ) կործանեց այն եւ սրատեց հայրենասեր վանականներից շատերին:
26 Ոյծը Սիւնեաց նահանգի Ծղուկ գաւառի (այժմեան Սիսիանի շրջան) պատմական գիւղերից մեկն է: Եղել են Մեծ եւ Փոքր Ոյծեր: Ուշ միջնադարից կոչուել է Ուզ:
27 Ծիծառնու վանքը (Ծիծեռնավանք) այժմեան Քաշաթաղի շրջանի տարածքում է: Հնագէտ-պատմաբան Յակոբ Սիմոնեանի ղեկավարած արշաւախմբի պեղումներից յետոյ վերականգնուել է բոստոնահայ բարերարների նիւթական աջակցութեամբ:
28 Շաղատը եղել է Սիւնիքի նախարարութեան առաջին գահանիստ կենտրոնը եւ հայ գրչութեան ամենանշանաւոր օջախներից մէկը: Շաղատի վարդապետները մեծ դեր կատարեցին Մեսրոպ Մաշտոցի ժամանակ հայագիր գրականութեան եւ թարգմանչական արուեստի զարգացման գործում: Շաղատը Անդոկ Սիւնեցու, Փառանձեմ հայոց թագուհու, Բաբիկի եւ Վասակ Մարզպանի ծննդավայրն է: Մինչեւ օրս պահպանուել է նոյն անունով:
29 **Ստեփանոս Օրբէլեան**, նշ. աշխ., էջ 151-152:
30 Նոյն տեղում, էջ 151:
31 Նոյն տեղում, էջ 153:
32 Նոյն տեղում:
33 Նոյն տեղում, էջ 152-153:
34 *Դիւան հայ վիմագրութեան*, հտ. 5, էջ 289:

35 **Ս. Յակոբեան**, *Հայ գիւղացիութեան պատմութիւն*, հ. 1, Երեւան, 1957, էջ 238:
36 **Ստեփանոս Օրբէլեան**, էջ 158-159:
37 Նոյն տեղում, էջ 149, 153, 159:
38 **Ս. Յակոբեան**, *Հայ գիւղացիութեան պատմութիւն*, 50-51:
39 **Ստեփանոս Օրբէլեան**, *նշ. աշխ.*, էջ 166-167:
40 Նոյն տեղում, էջ 167:
41 *Դիւան հայ վիմագրութեան*, հտ. 6, էջ 9, 75-74, 76, 103:
42 *Դիւան հայ վիմագրութեան*, հտ. Դ, էջ 37:
43 *Դիւան հայ վիմագրութեան*, հտ. Դ, 2, էջ 22, հտ. Գ, էջ 16, 55, 80, 96, 98, 162, 170, հտ. Դ, էջ 318, հտ. Դ, 5, էջ 13-15, 30, 55,204, 225, հտ. Դ, 6, էջ 33, 34, 96, 103, 110, 151:
44 Նոյն տեղում, 18:
45 Նոյն տեղում, էջ 24:
46 Նոյն տեղում, էջ 20:
47 Նոյն տեղում, 22:
48 *Դիւան հայ վիմագրութեան*, հտ. Դ, էջ 51:
49 *Դիւան հայ վիմագրութեան*, հտ. Դ, էջ 220:
50 Նոյն տեղում:
51 Նոյն տեղում:

© National Library of Armenia